Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11002/2024-ԱՔ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 5

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 3. Երևան -3 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.-31.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 10.01.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում.
- կենցաղային սպասարկում և խնամք.
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ-հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 64 շահառուի Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է թվով 69 դեպքի վարում՝ տարեկան վերափաստագրման 45 դեպք, նոր անձնագրի ստացման 15 դեպք, թվով 4 շահառուի համար ձևակերպվել է հրատապ աջակցություն. թվով 5 շահառու ստացել է աջակցող և օժանդակ պարագաներ/ օրթոպեդիկ կոշիկներ/: Չորս եռամսյակի ընթացքում ՄՍԵՏԿ-ից ձեռք է բերվել թվով 38 շահառուների համար միավորների տեղեկանք՝ դեղերի ստացման, բժշկական կենտրոններում անվճար հետազոտություններ անցնելու համար և այլն, թվով 2 շահառուի կենսաթոշակի գործը մի բանկից տեղափոխվել է մեկ այլ բանկ: Թվով 36 շահառուների համար կատարվել է գնումների և վճարումների իրականացում, սոցիալական աշխատողը թվով 34 շահառուի միջնորդել և ուղղորդել է միասնական սոցիալական ծառայություն՝ օժանդակ պարագաների /օրթոպեդիկ կոշիկներ, սայլակ, լողական սարք/ ձեռք բերման նպատակով, կենսաթոշակի վերահաստատումը կազմակերպելու նպատակով և այլն: Թվով 13 շահառու ուղեկցվել է տարբեր բժշկական կենտրոններ և տարբեր բանկեր՝ կենսաթոշակի համար տարեկան վերահաստատում կատարելու նպատակով այլն:

  Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 28 շահառուի հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որը միտված է եղել անձի ինքնասպասարկման կարողությունների զարգացմանը, հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, հիշողության ամրապնդմանը, սթրեսակայունության ձևավորմանը, պահպանմանը, անձի հուզական և մտավոր ունակությունների ու հմտությունների զարգացման ու ճգնաժամային իրավիճակներին համապատասխան վարքի դրսևորման հնարավորությունների ստեղծմանը:

  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ. անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:

Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է թվով 16 միջոցառում, որին մասնակցել են Արաբկիր վարչական շրջանի 17 շահառուներ.

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի տնային խնամքի թվով 62 շահառուի «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից տրամադրվել է սննդի փաթեթ:

- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 64 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների, կոմունալ վարձավճարների իրականացման. սննդի կազմակերպման. բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման. անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 64 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 55 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: Թվով 62 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով,այդ թվում «Նորմեդ» ԲԿ, Իզմիրլյան Կենտրոն, 8-րդ հիվանդանոց, Արթմեդ ԲԿ, ակնաբուժարան, տարբեր ատամնաբուժարաններ /շարունակական/: Թվով 37 շահառուի համար բուժքրոջ կողմից կատարվել է տնային պայմաններում հետազոտությունների իրականացման կազմակերպում, կատարվել է վերքի մշակում, վիրակապի փոխում (շարունակական), թվով 1 շահառուի համար ուղեգրի հաստատում 1-ին հիվանդանոցում՝ սրտի էխոգրաֆիա անցնելու նպատակով, թվով 24 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 25 շահառուի համար կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական), 1 շահառուի համար կատարվել է սպասարկող պոլիկլինիկայի փոփոխություն, թվով 11 շահառու նոր են ընդգրկվել տարածքը սպասարկող պոլիկլինիկա: Թվով 42 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի առկայությամբ: 46 շահառուի համար կատարվել է դեղորայքային գնումներ, 13 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցրվել է բժշկական քարտից քաղվածք, 40 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցվել է վերջիններիս հսկող բժշկի կողմից նշանակված դեղորայքային բուժման դեղատոմսը և հանձնվել շահառուներին:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրված նյութերի հղումները տեղադրվել են եռամսյակային հաշվետվություններում:

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ծրագրի շրջանակներում աշխատակազմի կարողությունների ու գիտելիքների շարունակական զարգացումն ապահովելու համար կազմակերպության աշխատակիցները մասնակցել են ներքոնշյալ թրեյնինգին.

1. Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանի տնային սպասարկման սոցիալական աշխատողները ամեն ամիս մասնակցել են ՄՄԾ խորհրդատվական նիստին:
2. Երևանը սպասարկող թիմերի սոցիալական աշխատողներն ու թիմ լիդերները մասնակցել են «Ֆունկցիաների միջազգային դասակարգում ՖՄԴ կիրառման ճանապարհային քարտեզը» և 1744-Ն նոյեմբերի 10 որոշման մեջ կատարված փոփոխությունների մասին քննարկումներին:
3. Սոցիալական աշխատողների համար կազմակերպվել է «Սոցիալական դեպքի վարման մեթոդաբանություն» թեմայով վերապատրաստման դասընթաց:
4. Հոգեբանը անհատական նախաձեռնությամբ մասնակցել է
    a. «Հայկական հոգևոր վերականգնման» հիմնադրամի կողմից կազմակերպված 18 ժամ տևողությամբ «Նարատիվային թերապիա» խորացված դասընթացին:
    b. «ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնում» կազմակերպված «Րրեյնսփոթինգ» միջազգային ինտենսիվ դասընթացին:

- ✓ Տարեկան կտրվածքով հոգեբանը սեփական նախաձեռնությամբ անցել է 5 ժամ անհատական սուպերվիզիա և 2 ժամ խմբային և 6 ժամ բալինտյան խումբ:
- ✓ Կազմակերպության աշխատողները՝ սոցիալական աշխատողները, բուժքույրերը և խնամողները Ալվերանում մասնակցել են Կազմակերպության կողմից կազմակերպված թիմ բիլդինգին:
- ✓ Թիմ լիդերը, սոցիալական աշխատողները և բուժքույրը մասնակցել են Ծենգավիթի ցերեկային կենտրոնում կազմակերպված թրեյնինգին՝ ուղղված սթրեսի կառավարման մեխանիզմներին հետտրավմատիկ շրջանում փախստականների հետ աշխատանքում:
- ✓ Այցախից բռնի տեղահանված քաղաքացիների կարիքների գնահատման նպատակով պաշտպանության մոնիթորինգ է իրականացվել Թիմ լիդերի՝ Անահիտ Մխիթարյանի, սոցիալական աշխատող Նարինե Չախոյանի կողմից:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 77/78 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 70 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 11 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 8 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 11 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 67 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –2<br>Բ – 76 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 78 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 78 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 78 |
| 5.1 | այդ թվում՝ թվով 7 մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 17 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 12 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն<br>սննդային փաթեթի տրամադրում | 28<br>82 |

Կազմակերպության ղեկավար ___*Երվանդ Մխիթարյան*___ «10» 01.2025թ